ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործով հայցը բավարարվում է ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պետք է բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես Դատարանում վճարված պետական տուրքի գումար:

Անդրադառնալով վերաքննիչ վարույթի հետ կապված դատական ծախսերին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պետք է բռնագանձել 75.000 ՀՀ դրամ՝ որպես Վերաքննիչ դատարանում նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ, 381-րդ, 387-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Անետա Սարգսյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը բավարարել:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/0138/02/24 քաղաքացիական գործով 29.02.2024 թվականի վճիռը բեկանել և փոփոխել հետևյալ կերպ՝

«1. «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության՝ ՀՀ ՊՆ ԳՀԱՊՁԲ–23-9/56 ծածկագրով ընթացակարգի շրջանակում « ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատվիրատուի ղեկավարի 11.12.2023 թվականի թիվ 95 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատվիրատուի ղեկավարի 11.12.2023 թվականի թիվ 95 որոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես Դատարանում վճարված պետական տուրքի գումար:»:

3. ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 75.000 ՀՀ դրամ՝ որպես Վերաքննիչ դատարանում նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով այն հրապարակվելու պահից մեկամսյա ժամկետում:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ**
**Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐ**
**Ս. ՀԱՐԹԵՆՅԱՆ**
**(ունեմ հատուկ կարծիք)**

**ԴԱՏԱՎՈՐ**
**Ս. ՄԱՏԻՆՅԱՆ**

« » 2024 թվականին որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ** **Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**